# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 հունվարի 2026թ. թիվ 7-Ա

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2021 թվականի հունվարի 26-ի թիվ 32-Ա որոշման 1-ին հավելվածով հաստատված ներքին աուդիտի կանոնակարգը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. 2026 թվականի տարեկան ծրագրի կատարումն ապահովելու նպատակով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ենթակայության կազմակերպություններում և մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումներում՝ ներքին աուդիտի ենթակա միավորներում 2026 թվականի ընթացքում իրականացնել աուդիտորական առաջադրանքներ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված կազմակերպություններում՝ ներքին աուդիտի ենթակա միավորներում աուդիտորական առաջադրանքների իրականացումը վերապահել «Քրոու Արմենիա» ՍՊԸ-ի աուդիտորներ Ալբերտ Ասատրյանին, Արտակ Թորոսյանին, Վարդան Սայադյանին (խմբի ղեկավար) և Գառնիկ Հովհաննիսյանին:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ենթակայության՝ ներքին աուդիտի ենթակա կազմակերպությունների տնօրեններին և ստորաբաժանումների ղեկավարներին՝

1) Աուդիտորական առաջադրանքների իրականացման գործընթացն ապահովելու նպատակով աջակցել ներքին աուդիտի աշխատանքային խմբի անդամներին, տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր և պարզաբանումներ:

2) Աուդիտորական առաջադրանքների իրականացման ընթացքում ներքին աուդիտորներին թույլատրել օգտվելու էլեկտրոնային տեղեկատվական համակարգերից:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. հունվարի 7
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 հունվարի 2026թ. թիվ 7-Ա

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2021 թվականի հունվարի 26-ի թիվ 32-Ա որոշման 1-ին հավելվածով հաստատված ներքին աուդիտի կանոնակարգը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. 2026 թվականի տարեկան ծրագրի կատարումն ապահովելու նպատակով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ենթակայության կազմակերպություններում և մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումներում՝ ներքին աուդիտի ենթակա միավորներում 2026 թվականի ընթացքում իրականացնել աուդիտորական առաջադրանքներ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված կազմակերպություններում՝ ներքին աուդիտի ենթակա միավորներում աուդիտորական առաջադրանքների իրականացումը վերապահել «Քրոու Արմենիա» ՍՊԸ-ի աուդիտորներ Ալբերտ Ասատրյանին, Արտակ Թորոսյանին, Վարդան Սայադյանին (խմբի ղեկավար) և Գառնիկ Հովհաննիսյանին:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ենթակայության՝ ներքին աուդիտի ենթակա կազմակերպությունների տնօրեններին և ստորաբաժանումների ղեկավարներին՝

1) Աուդիտորական առաջադրանքների իրականացման գործընթացն ապահովելու նպատակով աջակցել ներքին աուդիտի աշխատանքային խմբի անդամներին, տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր և պարզաբանումներ:

2) Աուդիտորական առաջադրանքների իրականացման ընթացքում ներքին աուդիտորներին թույլատրել օգտվելու էլեկտրոնային տեղեկատվական համակարգերից:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-01-08 09:54:19 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. հունվարի 7
ք.Վանաձոր